ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> փետրվարի 2013թվականի N 5 -Ն

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 185-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի <<ա>>, <<գ>>, <<դ>>, <<ժդ>>, <<ժե>> կետերով, 9-րդ հոդվածի 1-ին կետով, 10-րդ հոդվածի 1-ին կետի <<բգ>>, <<բդ>>, 4-րդ կետի 1-ին, 5-րդ կետի <<ա>>, <<գա>> ենթակետերով, 9-րդ կետի 2-րդ պարբերությամբ և 11-րդ հոդվածի 1-ին կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 12-ի <<Գյումրի քաղաքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2013թվականի դրույքաչափերը սահմանելու մասին>> N 185-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1. 1-ին կետի <<բգ>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5**0000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**,>>,

2. 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ <<բդ>> ենթակետով.

<<բդ) 3001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ **100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**.>>,

3. 4-րդ կետի 1-ին ենթակետում <<ոգելից>> բառից հետո ավելացնել <<և ալկոհոլային>> բառերը,

4. 5-րդ կետի <<ա>> ենթակետի <<տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ **500(հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ**>> բառերը փոխարինել <<տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ **500(հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝** 1 քառակուսի մետրի համար>> բառերով,

5. 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ <<գա>> ենթակետով.

<<գա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ **9000 (ինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ**

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման իրացման դեպքում՝ **1500 (մեկ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ**:>>,

6. 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

<<Հայաստանի հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ **100.000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ**:>>:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կողմ (19) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Գ.Ադամյան_____

Ա.Բադեյան_____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ